Յալալի

- «Յալալին» հանդիսավոր դանդաղ պար է ձեռքի ափերով բռնած:
- Պարի մասնակիցները երգի ամեն մի տողի սկզբի «յալալի» բառը համատեղ են երգել, իսկ մյուս բառերը ձայնեղ պարողներն են մեներգել:
- Յալալի բառը ձայնարկություն է:

Յալալի, Տերն հարություն է առել,
Յալալի, հավը կարմիր է ածել,
Յալալի, Պողոսն երազ է տեսել,
Յալալի, Պողոս, երազդ ի բարի,
Յալալի, շնորհավոր Նոր տարի,
Յալալի, Նոր տարի ու նոր բարի:
Յալալի, ախպերս ուր է, ուր է,
Յալալի, պառկել բաղչան ի քուն է,
Յալալի, նըխշուն բարձը գլխուն է,
Յալալի, ջուր վերևոք անցել է,
Յալալի, նըխշուն բարձը թրջել է,
Յալալի, ախպորս քնից հանել է,
Յալալի, ախպեր, ելի էդ քնից,
Յալալի, գինի խմի էս գավից,
Յալալի, գինին անապակ խմի:
Յալալի...